Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
հուլիսի 18-ի N 1115 - Ն որոշման

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՄ ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՄԲ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՌԵԵՍՏՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒՆ ՀԱՎԱԿՆՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԵՐԻ) ԵՎ (ԿԱՄ) ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ (ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ՄԱՍԵՐԻ) ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ, ՍԱՐՔԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆԸ, ՄԱԿԵՐԵՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Լիազորված տնտեսական օպերատորի տարածքներում պետք է առկա լինի տրանսպորտային միջոցների գծանշված կայանատեղի՝ առնվազն 100 քառ. մետր մակերեսով: Գծանշումները պետք է նախատեսված լինեն այնպես, որ կայանման վայրերի չափերը համապատասխանեն կայանվող բեռնատար մեքենաների չափերին:

2. Դեպի լիազորված տնտեսական օպերատորի տարածք՝ նախատեսված մերձատար ուղիները պետք է լինեն տեխնիկապես սարքին վիճակում, ինչը պետք է հնարավորություն ընձեռի մաքսային մարմիններին մաքսային հսկողության նպատակով անհրաժեշտ գործառնությունների իրականացման համար:

3. Լիազորված տնտեսական օպերատորի տարածքներում տեղակայելու համար նախատեսված ապրանքները կշռելու հնարավորություն ապահովող կշռման սարքավորումները (չափման միջոցները) պետք է ունենան առնվազն 3 տոննա կշռելու հնարավորություն, իսկ ավտոմեքենաները կշռելու հնարավորություն ապահովող կշռման սարքավորումները (չափման միջոցները)՝ առնվազն 40 տոննա կշռելու հնարավորություն և պետք է համապատասխանեն «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով սահմանված պահանջներին:

4. Լիազորված տնտեսական օպերատորի փակ տարածքների ընդհանուր մակերեսը պետք է լինի առնվազն 400 քառ. մետր, ընդ որում, ապրանքների

պահպանության համար նախատեսված պահեստային շինության տարածքը պետք է կազմի փակ տարածքների ընդհանուր մակերեսի առնվազն 60%-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ